

# ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԼՈՒՍԱԻՈՐՉԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՆԱՓՈՒԼԸ

ՎՐԷԺ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Հայոց գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի (մօտ 382-440) պատանեկան տարիներն անցան Հայոց Արշակունիների թագաւորութեան քաղաքական հոգեվարքի պայմաններում, որն ի վերջոյ 387ին հանգեցրեց Հայաստանի առաջին բաժանմանը երկու հզօրագօր արտյեանների՝ Հոռոմէական Կայսրութեան եւ Սասանեան Պարսկաստանի միջեւ: Մեծ Հայքի թագաւորութիւնը զաղարեց միասնական պետութիւն լինելուց եւ ընկաւ վերոյիշեալ երկու մրցակից արտյեանների գերիշխանութեան տակ: Ե. դարի հայ պատմիչ Ղազար Փարպեցին դառնացած գրում է, որ այդ բաժանումից յետոյ «անկաջ ի ստրկութիւն, եւ խոնարհեալք յամարգութիւն անողորմութեամբ գտեալք ի բաժանումն»<sup>1</sup>:

Ստեղծուած պայմաններում հայ ժողովրդի գոյապահպանման հզօր ու անկապտելի միջոցը դարձաւ նրա հոգեւոր անկախութիւնը, որի զարբնողը Հայաստանեայց առաքելագրոյձ Եկեղեցին էր: Եկեղեցուն վճռորոշ դեր էր վերապահուած նաեւ երկրի հասարակական-քաղաքական զարգացման գործընթացներում: Քրիստոնէութիւնը թէեւ պետական էր հռչակուել տակաւին Հայոց եպիսկոպոսապետ Գրիգոր Ա. Լուսաւորչի (գահակալել է 302-325ին) ժամանակներից, սակայն մէկ դար ձգուող ժամանակամիջոցում չյաջողուեց այն հայացնել եւ դարձնել հոգեւոր ազդու գործօն: Մանրակշիռ այդ իրողութիւնը նկատի առնելով, 387ից Հայոց կաթողիկոսի գահաթոռին բազմած Սահակ Ա. Պարթեւը՝ Ներսէս Ա. Մեծ կաթողիկոսի (գահակալել է 353-373ին) որդին եւ Լուսաւորչի փառապանձ տան վերջին արու ժառանգն, իր շուրջը համախմբեց երկրի շնորհասուն ու մտացի ոյթերին եւ լիարուսն ջանքերով հոգ տարաւ ժողովրդին հոգեւորապէս գինելու եւ վերահաս գոյամաքառումներին դիմակայելու համար: Նրա գինակիցը դարձաւ Մեսրոպ Մաշտոցը: Սահակի ու Մաշտոցի լուսաւորչական, հայրենաշահ գործունէութեամբ Հայաստանն ապրեց աննախագէյ մտաւոր զարթօնը:

Մաշտոցի աշակերտ եւ կենսագիր Կորիւնի հաւաստմամբ, «էր Մաշտոց... ի Տարօնական գաւառն, ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելոյ Վարդան կոչեցելոյ»: Պատմիչը Մաշտոցի հօրը լիչում է «երանելի» մակդիրով, թերեւս նկատի առնելով նաեւ հոգեւորական դասին նրա

պատկանելու հանգամանքը, որը կարող էր նպաստել, որպէսզի Մաշտոցն «ի մանկութեան տխն» սովորի յունարէն, «վարժեալ հելլենական դպրութեամբն»<sup>2</sup> եւ ուսանի տակաւին Ներսէս Մեծի օրօք հիմնուած դպրոցներից մէկում: Ըստ երեւոյթին, այսպիսի մի հանգամանքի հիմամբ է հայոց պատմահայր Մովսէս Խորենացին գրում, թէ Մաշտոցը «սնեալ եւ ուսեալ է առ Մեծին Ներսիսի»<sup>3</sup>: Եւ որովհետեւ Հայաստանի դպրոցներում ուսուցումը տարւում էր նաեւ ասորերէնով, ուստի Մաշտոցը հարկ է որ սովորէր այդ լեզուն, մանաւանդ որ այն միաժամանակ Հայաստանեայց Եկեղեցու ծիսական լեզուն էր: Որոշ փաստեր թոյլ են տալիս կարծելու, որ Մաշտոցը տիրապետում էր նաեւ պարսկերէնին, այսինքն՝ Մասանեանների ժամանակաշրջանի պահլաւերէնին: Հայաստանի առաջին բաժանումից յետոյ, ինչպէս յայտնի է, յունարէնն արգելուեց Մեծ Հայքի պարսկական բաժնում, ուստի հայոց թագաւորն արեաց արքայի հետ զրազրութիւնները հարկ է որ վարէր պարսից լեզուով: Կորիւնը վկայում է, որ Մաշտոցը «եկեալ հասեալ ի դուռն Արշակունեաց բագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանացն»<sup>4</sup>: Դրան անշուշտ, նպաստել է լեզուների նրա իմացութիւնը: Ըստ երեւոյթին, Հայաստանի առաջին բաժանումից յետոյ յատկապէս կարեւորուել է պարսկերէնի, իբրեւ միջպետական զրազրութիւնների միջոցի, Մաշտոցի քաջագիտակութիւնը: Խորենացին կարեւորում է հայոց արքունիքում պարսկերէնի իմացութիւնը եւ անուղղակիօրէն դրանում Մաշտոցի հմտութիւնը: Պատմահայրը նշում է, որ արքունիքից Մաշտոցի հեռանալուց յետոյ Վռամշապուհ թագաւորը (գահակալել է 389-414ին) մեծ նեղութիւններ կրեց «յաղագս քարտուղարի զի մինչ գնաց Մեսրոպ յարքունական դրանէն՝ ոչ զոր ի ճարտարաց գտանէր անդ ի դպրաց, քանզի պարսկականան վարէին գրով»<sup>5</sup>:

Հայոց արքունիքում Մաշտոցի աշխատանքի անցնելու առնչութեամբ Կորիւնը յիշում է ոչ թէ Վռամշապուհի եղբայր եւ նախորդ Խոսրով Գ-ին (առաջին անգամ գահակալել է 385-388ին), այլ Առաւան հազարապետին, նշելով, որ դա տեղի է ունեցել «առ հազարապետութեամբն աշխարհիս Հայոց Առաւանայ ուրումն»<sup>6</sup>: Կորիւնի այս վկայութիւնը որոշ չափով լոյս է սփռում արքունիքում Մաշտոցի գործունէութեան վրայ եւ թոյլ է տալիս կարծելու, որ արքունի դիւանում նա վարել է հայոց հազարապետութեան իրաւասութեանը ենթակայ գործերին առնչուող զրազրութիւնները, որոնք աղերսակցւում էին երկրի

տնտեսութեանը, բնակչութեան հարկային, գանձահասութեային պարտաւորութիւններին, պարհակներին:

Կորիւնը գրում է, որ Մաշտոցը, թագաւորական զրանը ծառայելու ընթացքում, «տեղեկացեալ եւ հմուտ եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստին իրոց զօրականացն»<sup>7</sup>: Փարպեցին հաղորդում է, որ Մաշտոցը «զինուորեալ ի դուռն Հայոց արքային Խոսրովայ, կարգեալ յերամ մատենագիր արքունի դպրացն»<sup>8</sup>: Պատմագիրը նաեւ յաւելում է, որ այդ մասին «քէ կամիցի որ զիտել հաւաստեալ ի պատմութենէ գրոց առն ցանկալի Կորեան, աշակերտի նորին երանելոյն Մաշտոցի, կարդացեալ տեղեկացի զվարս կենաց նորա եւ զիր հայերէն նշանագրացն»<sup>9</sup>: Այդպիսով Փարպեցին միայն աւելացնում է Հայոց Խոսրով թագաւորի անունը, եւ նշում, որ նրա զիւանում գրագրի պաշտօն է վարել Մաշտոցը: Իսկ Խորենացու հաւաստմամբ, Մաշտոցը ներսէս Մեծի վախճանուելուց (373) յետոյ կարգուել է «ի դրանն արքունի... քարտուղար»<sup>10</sup>, բայց պատմագիրը չի նշում, թէ ո՞ր թագաւորի արքունիքում է Մաշտոցը վարել այդ պաշտօնը:

Փարպեցին վկայում է, որ Խոսրով Արշակունին Հայաստանում թագաւորել է Հայաստանի առաջին բաժանումից (387) անմիջապէս յետոյ<sup>11</sup>: Այդպիսով, Մաշտոցը Հայոց թագաւորի զիւանում աշխատանքի է ընդունուել 387ից յետոյ: Փարպեցու վկայութիւնը հաւաստի է: Ըստ ակադեմիկոս Յակոբ Մանանդեանի, Փարպեցին օգտուել է ցարդ անյայտ մի հին սկզբնաղբիւրից<sup>12</sup> կամ, հաւանարար, նա ձեռքի տակ ունեցել է Կորիւնի երկասիրութեան սկզբնագիր օրինակը, որը մեզ չի հասել<sup>13</sup>:

Ենթադրում է, որ Մաշտոցն աշխատանքի է ընդունուել արքունի զիւանի այն դպիրների շարքը, որոնք, Բիւզանդական Կայսրութիւնում մագիստրոսների զիւանատներում ծառայող «գրասենեակայինների» (officialles) պէս, միաժամանակ կատարում էին նաեւ զինուորական ծառայութիւն<sup>14</sup>: Հաւանարար, Հայոց արքունիքում պաշտօնավարելու բերումով է Մաշտոցը մտել զինուորական ծառայութեան ասպարէզ, ըստ երեւոյթին, իբրեւ զօրքին առնչուող գրագրութիւններ վարող: Որպէս գրագէտ ու բանիմաց անձնաւորութիւն, նա, հնարաւոր է, աչքի է ընկել արքունի զրանը, նաեւ՝ նախարարների միջավայրում, քանի որ զինուորական ծառայութիւնը վերջիններիս հիմնական զբաղմունքն էր: Այսպէս կարծելուն թելադիր է Կորիւնի վերը յիշուած վկայութիւնը՝ իր զինուորական «արուեստի», իմա՝ հմտութեամբ ու ճարտարութեամբ, զօրականներին Մաշտոցի դուր գալու մասին: Զօրքում ծառայելու պա-

րագայում նա պէտք է գտնուէր բանակում, բնաւ չառնչուէր հոգեւոր դասի հետ<sup>15</sup>։ Ի դէպ՝ յատկանշելի է, որ յետագայում Ներսէս Բ. Բագրեւանդեցի կաթողիկոսի (դա՛հակալել է 548-557ին) եւ Ներշապուհ եպիսկոպոսի կողմից սահմանուած կանոնախմբի Ե. կանոնում ասուում է, որ «քեւ գրակարդացք իցեն եւ պաշտաւնեայք, ընդ զինոտքս կացցեն»<sup>16</sup>։

Հայ նախարարները մեծ նշանակութիւն էին տալիս բանակին, ի մասնաւորի, իրենց զօրարածիներին առնչուող գրագրութիւններին։ Հայաստանի գօրքը, ինչպէս յայտնի է, համալրուում էր թագաւորական այրուծիով, իսկ պատերազմական գործողութիւնների ժամանակ՝ նաեւ ըոյր նախարարների զօրամասերով։ Կորիւնի հաւաստմամբ, Մաշտոցն «ամենայն պատրաստութեամբ զանձն զարդարեալ, հարկանէր զիշխանացն սպասաւորութիւնսն»<sup>17</sup>։ Այս խօսքերից հետեւում է, որ Մաշտոցն իշխանների համար կատարել է ծառայութիւններ։ Եւ եթէ նա գինուորական ծառայութեան մէջ էր, ապա բնական կը լինի կարծել, որ պէտք է վարէր նախարարների զօրագնդերի հետ առնչուող գրագրութիւնները։ Բայց այդ գրադմունքը, ինչպէս վկայում է նրա կենսագիրը, Մաշտոցի տարբեր չէր։ Ուստի նա, աւետարանական կանոնի համաձայն, «ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրին դարձեալ, մերկանայր այնուհետեւ զիշխանակիր ցանկութիւնսն... Եւ հաճեալ հրամանացն՝ ի խաչակիր գունդն Քրիստոսի խառնէր, եւ անդէն վաղվաղակի ի միայնակեցական կարգ մտանէր»<sup>18</sup>։ Ուրեմն Մաշտոցը, ուրանալով իր անձը, գտել է իր հոգու ճարակը՝ նուիրուելով քրիստոնէական հաւատի քարոզչութեանը։ Փարպեցին գրում է, որ Մաշտոցը գինուորական ծառայութեան ժամանակ «տենչացեալ կարգի վանականութեան՝ երթայ ի վանս բազմութեան եղբարց, եւ ընկալեալ զկերպարանս վանականութեան՝ լինէր ընտիր յամենայնի եւ երեսիլի. հրաժարէր յամենայն աշխարհագրօս երկրատր զբաղմանց։ Ապա յանապատական կրօնս փոխեալ՝ զարմանալի երեւեր եւ հռչակաւոր. եւ կայր յանապատս ի բազում տեղիս քարանձաւաց, մեծաւ առաքինութեամբ եւ խստամբեր վարիւր»<sup>19</sup>։ Կորիւնը նոյնպէս վկայում է, որ Մաշտոցը, գինուորական ծառայութիւնը թողնելուց յետոյ, ապրել է անապատականի խստամբեր կեանքով՝ «զանձն տուեալ՝ միայնաւորութեան, լեռնակեցութեան, քաղցի եւ ծարաւոյ եւ բանջարածաշակութեանց, արգելանաց անլուսից, խարագնագգեստ եւ գետնատարած անկողնոց»<sup>20</sup>։

Եկեղեցին անապատականներին պահում էր իր հսկողութեան տակ, ուղղութիւն էր տալիս նրանց գործունէութեանը։ Մաշտոցն իր շուրջն էր համախմբել մի քանի միայնակեաց աշակերտների, նրանց ուսուցա-

նում աւետարանական ճշմարտութիւնները<sup>21</sup> : Ուստի, նա բնականաբար պէտք է գրաւէր Հայաստանեայց Եկեղեցու Հայրերի ուշադրութիւնը : Մաշտոցը «պայծառացեալ՝ ծանօթական եւ հաճոյ լինէր Աստուծոյ եւ մարդկան»<sup>22</sup> : Ընդամին, Կորիւնը, Մաշտոցի մասին պատմելիս, դիմում է սուրբգրական գուգահեռներին, անշուշտ, նկատի ունենալով նաեւ իր ուսուցչի աստուածայնօրէն սրբահեղ ու ճգնասուն վարքը եւ քարոզչական գործունէութիւնը : Պատմագիրը համոզուած է, որ Մաշտոցը բացառիկ այն ընտրեալներից էր, որոնք արժանի են յիշուելու աստուածաշնչական այրերի կողքին : Նման գուգահեռների դիմելով Կորիւնը գլխաւորապէս ելնում է իր ուսուցչի անեղծեալ «զհաւատոցն ճշմարտութիւն»<sup>23</sup> փաստից, ինչը բնորոշ էր սուրբգրական այրերին, անկախ նրանից, թէ ո՞ր դասին էին պատկանում նրանք : Մաշտոցը, Կորիւնի համոզմամբ, Աստուծոյ ընտրեալներից էր, որոնց վրայ ոչ ոք չէր կարող «բիծ դնել»<sup>24</sup> : Պատմիչը գրում է, որ առաքեալներն Աստուծոց էին թոյլտուութիւն ստացել՝ գրելու իրենց գործակիցների առաքինութիւնների, հաւատի ճշմարտութեան մասին, որպէսզի «օրինակ եւ կանոն զկնի եկելոցն պաշտիցի, որպէս ի նոյն իսկ զի բարեաց գործոց նախանձաւոր լինել ամենեցուն»<sup>25</sup> : Նա համոզուած է, որ «գովութիւն ամենայն աստուածաւեր ընտրելոցն ի Տեառնէ Ե», որի նպատակն է միմեանց քաջալերելով «հասանիցեմք ի բարեացն կատարումն»<sup>26</sup> : Եւ առաքեալներին ի գուգակչիս, Կորիւնը գտնում է, որ ինք Մաշտոցի վարքը գրելու համարձակութիւնը ստացել է Աստուածաշնչից եւ առաքեալներից յետոյ ստեղծուած կանոնական գրուածքներից<sup>27</sup> : Պատմագիրն իր երկը վերնագրել է Վարք Մաշտոցի, անշուշտ, ելնելով նաեւ իր լուսադաւան ուսուցչի, աստուածաշնչօրէն վսեմ սրբակրօնութեան, առաքելաչաւիղ գործունէութեան փաստից :

Մաշտոցի առաջին քարոզչութեան վայրը դիցաշունչ Գողթն գաւառն էր, որի բնակիչները կառչած էին հեթանոսական հաւատալիքներին եւ մերժում էին քրիստոնէական կրօնը : Այդպիսի վայր մեկնելն, անշուշտ, ոչ մի դրական հեռանկար չէր խոստանում Մաշտոցին ու նրա աշակերտներին : Վտանգներով եւ անկանխատեսելի հետեւանքներով յղի այդ ձեռնարկութեանը նրանք դիմել են կամովին, քանի որ դա էր թելադրում նրանց հաւատը, անապատականի ուխտը եւ ծանրալուծ կեցութիւնը : Մաշտոցի այդ նախաձեռնութիւնն, անշուշտ, խրախուսուել է Սահակի կողմից : Փաստօրէն, Գողթնը դարձաւ Մաշտոցի քարոզչական առաքելութեան սկզբնաշրջանի փորձաքարը : Այդտեղ աւելի կոփուեց նրա հաւատը, նրա մէջ սնուցանելով քարոզչական առաւել գործօն հո-

գեւոր միջոցների դիմելու անհրաժեշտութեան գաղափարը: Անշուշտ, հենց այդ յետնախորքի վրայ էր, որ նրա մէջ ծագեց հայերէնով կրօնական գրականութիւն ունենալու գաղափարը: Իսկ առանց հայերէն գրերի բացառում էր դրա հնարաւորութիւնը: Մաշտոցն իրօք «առաջինն է զգացել սեփական գիր ունենալու պահանջը եւ հիմը ձգել ազգային դպրութեան»<sup>28</sup>:

Յայտնի իրողութիւն է, որ քրիստոնէութիւնը պետական հռչակելու արշալույսին այդ կրօնն ընտանի դարձաւ հիմնականում հայ ազնուական դասի միջավայրում: Ուստի Գողթնի բարեպաշտ իշխանը սատար կանգնեց Մաշտոցին ու նրա աշակերտներին: «Ընդ առաջ ելանէր նմա, հաւաստում է Կորիւնը, իշխանն Գողթան, այր երկիւղած եւ աստուածատր, որում անուն էր Շարիթ, եւ ասպնջական հիւրամեծար գտեալ բարեպաշտութեամբ սպասատրէր ըստ աշակերտաց հաւատոցն Քրիստոսի»<sup>29</sup>:

Կորիւնը, որ մեծ ուշադրութիւն է դարձնում Մաշտոցի քարոզչական առաքելութեանը, ջանում է դրական երանգներ հաղորդել իր ուսուցչի քարոզչական այս անդրանիկ փորձին, անշուշտ սխալ գնահատելով այդ ընթացքում ձեռք բերուած արդիւնքները: Պատմագիրը կարծում է, որ Մաշտոցը փութեռանդօրէն «գաւեռարանական արուեստն ի մէջ առեալ, ծեռն արկանէր զգաւառովն հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին. գերեալ զամենեսեան ի հայրենեաց աւանդելոց, եւ ի սատանայական դիւապաշտ սպասատրութենէն՝ ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր»<sup>30</sup>:

Սակայն, պատմագրի յետագայ շարադրանքից երեւում է, որ դիցապաշտ գողթնեցիները բնաւ չեն փարուել նոր կրօնին: Նրանք առերես ընդունեցին այն, քանի որ Մաշտոցին սատարում էր գաւառատէր իշխանը: Անգամ հայոց գրերը հնարելուց յետոյ Մաշտոցն ու իր աշակերտները ստիպուած վերստին քարոզչութեան մեկնեցին Գողթն եւ յարակից շրջաններ՝ «ի սփիռսս հեթանոսաց», որպէսզի նրանց մէջ «զբանն կենաց սերմանիցեն»<sup>31</sup>: Գողթնում իր կատարած առաջին քարոզչութիւնից յետոյ, ինչպէս հաղորդում է Կորիւնը, Մաշտոցն ընկաւ հոգետանջ մտածումների գիրկը, առ Աստուած վերառաքելով «առաւել աղօթս մշտնջենամոռնչս եւ բազկատարած պաղատանս...անկեալ ի ծուփս խորիրոց, եթէ որպիսի՝ արդեօք եյս իրացն գտանիցէ»<sup>32</sup>: Հետեւաբար, նա իր անդրանիկ քարոզչութեան ժամանակ ընկել էր գրեթէ անեկանելի կացութեան մէջ, որից ելք էր որոնում:

Կորիւնը չի նշում իր ուսուցչի հոգեւոր մտածումների բուն պատճառը, այն է՝ հայերէն գիր ու կրօնական գրականութեան բացակայութիւնը: Մինչդեռ Փարպեցին պարզ ու մեկին գրում է, թէ Մաշտոցին մտատանջում էր այն, որ «պաշտօն եկեղեցւոյ եւ կարդացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս եւ յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս. յորմէ ոչ ինչ էին կարող լսել եւ օգտել ժողովուրդքն»<sup>33</sup>:

Հայաստանում զգալի էր ասորի հոգեւորականութեան գործուն ազդեցութիւնը: Տակաւին Լուսաւորչի օրօք, ասորերէնը քրիստոնէարանութեան միջոց էր, եւ ասորի հոգեւորականութեան զգալի մասը կառչած էր քրիստոնէութեան Ալեքսանդրեան Ուղղութեանը եւ նրա որդեգրած ուղղափառ հաւատքին, որի հետեւորդներն էին նաեւ հայ հոգեւոր դասի ներկայացուցիչները: Եւ դարու հայ պատմիչ Փաւստոս Բուզանդը վկայում է, որ Լուսաւորիչն ասորի Դանիէլ քրեպիսկոպոսին կարգեց «վերակացու եւ գլխատր եկեղեացն նահանգին Տարօնոյ, Գրիգորի ձեռական՝ իշխանութեանն կողման մասին գործակալութեանն մեծի դատաւորութեանն»: Աւելին. Դանիէլը համարոււմ էր նաեւ «վերակացու եւ հրամանատար տեսուչ եւ հոգաբարձու ամենայն եկեղեցեացն Հայոց մեծաց ընդ ամենայն տեղիս»<sup>34</sup>: Լուսաւորչից յետոյ Հայաստանեայց Եկեղեցին շարունակեց պահպանել կրօնադաւանական մերձակցութիւնը Ալեքսանդրեան, ինչպէս նաեւ Եդեսիայի ասորական եկեղեցւոյ հետ:

Հայաստանի եկեղեցիներում ասորերէնով քարոզչութեան փաստն ունէր ոչ միայն կրօնադաւանական, այլեւ քաղաքական յետնախորք: Ասորերէնը Սասանեան Պարսկաստանում պաշտօնապէս ճանաչուած քրիստոնէական եկեղեցու ծիսական լեզուն էր: Ասորիները զուրկ էին ինքնուրոյն պետականութիւնից եւ հովանաւորոււմ էին պարսից արքունիքի կողմից, ուստի հակուած չէին դէպի Արեւմուտքի քրիստոնէական աշխարհը: Այդ պատճառով ասորական քրիստոնէութիւնը վտանգաւոր չէր Սասանեան Դրան համար: Հայոց եկեղեցւում ասորերէնի ծիսական լեզու լինելու հանգամանքը յոյժ մեծացնում էր ասորի հոգեւորականութեան դերը Հայաստանի եկեղեցական միջավայրում: Հայերէն գիր ու գրականութիւն ստեղծելը բնականաբար հանդիպելու էր այդ հոգեւորականութեան զօրեղ դիմադրութեանը եւ կարող էր սասանեան արքունիքի կողմից դիտուել որպէս քրիստոնէայ Բիւզանդիայի կողմը հակուելու փորձ:

Մաշտոցն ու Սահակը չէին կարող անտեսել այդ զօրեղ հանգամանքը: Կաթողիկոսը հասկանում էր, որ հայերէն գրերի ստեղծումը կարող

է բախել պարսից դրան կողմից յարուցուած խոչընդոտների, ուստի նա գտաւ, որ այդ մասին անպայման պէտք է տեղեակ պահել Վասմշապուհին: Մաշտոցը, որ քահանայ էր ձեռնադրուել Սահակի կողմից<sup>35</sup>, անսաց նրան եւ յուսապնդուեց նրանից: Նրանք երկար ժամանակ չէին կարողանում իրագործել իրենց դարակազմիկ մտայղացումը: «Անուրս բազումս» այդ սրբահեզ այրերն Աստուծոց աղերսում էին փրկութիւն պարգեւել հայ ազգին<sup>36</sup>:

Հայերէն գրերի ստեղծումը ասորական եկեղեցուց վարչական եւ դաւանական ինքնուրոյնութեան յոյսեր էր ներշնչում Սահակին ու Մաշտոցին: Բայց նրանց մտայղացումն իրագործելու ճանապարհի խոչընդոտները վերացնելու նպատակով անհրաժեշտ էր իրենց յղացումը համաձայնեցնել Հայաստանի եկեղեցական զասի ներկայացուցիչներին եւ, առաջին հերթին, իհարկէ, ասորի կղերականների հետ: Այդ նկատառումով նրանք ժողովեցին «գաշխարհահոգ խորիուրդն երանելի միաբանելոցն», որոնց մէջ անշուշտ, ազդեցիկ էին նաեւ ասորի կղերականները: Սակայն, ժողովականները չկարողացան վերջնական վճիռ կայացնել, քանի որ արծարծուող խնդիրն ունէր քաղաքական սուր հնչեղութիւն: Նրանք, գրում է պատմագիրը, «բազում հարցուփորձի եւ քննութեան զանձիմս պարապեցուցեալ եւ բազում աշխատութեանց համբերեալ», ի վերջոյ իրենց մտայղացումը յայտնում են Վասմշապուհին<sup>37</sup>: Ըստ երեւոյթին, ժողովական այրերը երկար ժամանակ վիճարանել են հայերէն նշանագրեր ստեղծելու շուրջը: Հաւանաբար, ասորի հոգեւորականները կամեցել են, որպէսզի գործածութեան մէջ գրուեն Դանիէլ ասորու մօտ պահուող գրերը: Սակայն, դրանք պակասաւոր էին, չէին արտայայտում հայերէնի բոլոր հնչոյթները: Կորիւնը գրում է, որ նշեալ տառերը վերցուած էին ուրիշ դպրութիւնից («քաղեալք եւ յարուցեալք») եւ պիտանի չէին ուսուցանելու, գրական գործեր ստեղծելու համար<sup>38</sup>: Դրանք արամէական (հին ասորական) հնացած գրեր էին<sup>39</sup>, միանգամայն անպէտք՝ հայեցի ուսուցման համար:

Ասորի հոգեւորականները հասկանում էին, որ հայերէն գրերի ստեղծումը խիստ հարուածելու է իրենց հեղինակութեանը եւ թէ հայոց եկեղեցիների կամարների տակ այլեւս չին հնչելու ասորերէն ժամերգութիւններ: Հասկանալի է, նրանք այդ խնդիրը բացայայտօրէն չէին յարուցի, այլ տեղափոխելու էին քաղաքական հարթութեան վրայ, քաջ գիտենալով, որ սասանեան տիրակալը հովանաւորում է ասորական քրիստոնէութեանն իրրեւ Բիւզանդական Եկեղեցուն հակակռուող ոյժի<sup>40</sup>: Այդ ծանրակշիռ հանգամանքը, անշուշտ, վճռական ազդեցութիւն կա-

րող էր թողնել նաև Վառձապուհի վրայ, որի բարձր հեղինակութեամբ զազարեցուել են Հայաստանի հոգևորականների միջև ընթացող բանակախնները եւ ընդունուել է Դանիէլ եպիսկոպոսի մօտ պահուող նշանագրերը բերելու առաջարկը, որ արել էին ժողովական ասորի հոգևորականները:

Երկու տարուայ ուսուցումն ապացուցեց, որ ասորի հոգևորականները սխալ հաշուարկ էին արել Դանիէլեան կոչուած գրերի խնդրում: Գրանցով Հնարաւոր չեղաւ աշակերտներին հայերէն ուսուցանել: Անշուշտ, այդ ընթացքում Մաշտոցը որոշակի փորձ ձեռք բերեց հայերէնի հնչոյթներին համապատասխանող նշանագրեր յօրինելու առումով: Այդ փորձը կարող էր վստահութիւն ներշնչել նրան՝ գրերի գիւտն իրագործելու համար: Կորիւնը գրում է, որ Մաշտոցը երկու տարի Դանիէլեան Գրերով դասաւանդեց հայ աշակերտներին, «որով եւ յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ՝ երանելիս հասանէր»<sup>41</sup>: Երկամեայ ուսուցչական աշխատանքի ընթացքում Մաշտոցը վարդապետական իր հեղինակութեամբ կարողացաւ ապացուցել, որ Դանիէլեան Գրերը պիտանի չեն ուսուցման համար: Այդուհանդերձ, Սահակն ու Մաշտոցը ստիպուած էին ընդառաջել ասորի հոգևորականներին: Եւ Մաշտոցը՝ Վառձապուհի հրամանով ու Սահակի համաձայնութեամբ, մեկնեց Միջագետքի Ամիդ եւ Եղեսիա քաղաքներ, որոնք Պարսկաստանի կազմում էին: Եղեսիայում Մաշտոցին եւ իր աշակերտներին ընդունեց Բարուլաս (Կորիւնի մօտ՝ Բարիլաս) եպիսկոպոսը: Մաշտոցը յոյս ունէր այս եպիսկոպոսի օժանդակութեամբ եւ յանձնարարականներով իր աշակերտներին ուսման տեղաւորել տեղի դպրոցներում, որպէսզի կարողանան ասորերէնից հայերէնի վերածել Ս. Գիրքը: Հասկանալի է, դրա համար անհրաժեշտ էր ստեղծել հայերէն նշանագրեր: Քանի որ Եղեսիան գտնուում էր Պարսկաստանի կազմում, Սասանեան Դուռը քրիստոնէաբանութեան այդ նշանաւոր կենտրոնում ընթացող կրօնադաւանական, մշակութային ձեռնարկումները դիտում էր որպէս իր ախտեան Բիւզանդիայի եւ ընդհանրապէս Արեւմտեան Եկեղեցու դէմ նպատակաուղղուած միջոցառումներ եւ այդ պատճառով արգելքներ չէր յարուցում դրանց նկատմամբ: Եւ Հենց Եղեսիայում էլ Մաշտոցը հնարեց հայոց գրերը, որպէսզի չյարուցի պարսից արքունիքի կասկածները: Կորիւնը գրում է, որ Եղեսիայում Մաշտոցն այդ դարակազմիկ գործն աւարտեց շատ կարճ ժամանակում<sup>42</sup>: Ըստ երեւոյթին, նա, մինչեւ Եղեսիա մեկնելն, այդ ուղղութեամբ արդէն որոշ քայլեր կատարել էր, բայց հասկանալի նկատառումներով գերադասեց գրերի գիւտին առնչուող աշխա-

տանքներն աւարտել ոչ թէ Հայաստանում, այլ Եղեւսիայում: Խորենացին գրում է, որ Մաշտոցը Եղեւսիայում եղաւ Պղատոն անունով մի հեթանոս ճարտասանի մօտ, որը դիւանապետ էր, բայց չկարողացաւ օգնել Մաշտոցին, հայերէն չգիտենայու պատճառով: Պղատոնի ուսուցիչ Եպիփանի աշակերտն էր Հռոփանոս անունով յոյն գրագիրը՝ Սամոսատ քաղաքից՝<sup>43</sup> Ըստ Կորիւնի, Մաշտոցը Եղեւսիայում յորինեց հայոց գրերը՝ «վաղվաղակի նշանակեալ, անուանեալ եւ կարգեալ, յօրինէր սիողոքայիւք կապօք»<sup>44</sup>: Խորենացու հաղորդմամբ, Մաշտոցը Սամոսատում «յարուցեալ յաղօթիցն՝ եստեղծ զնշանագիրս մեր, հանդերձ Հռոփանոսի կերպածեալ զգիրն առ ձեռն պատրաստ Մեսրոպայ, փոխատրելով զհայերէն արութայսն ըստ անսայթարութեան սիողաքայից Հելլենացոց»<sup>45</sup>: Բայց Հռոփանոսի դերը հայոց գրերի ստեղծման գործում շատ համեստ էր: Նա հասարակ գեղագիր էր, ըստ Կորիւնի՝ «գրիչ ոմն հելլենական դպրութեան»<sup>46</sup>:

Ըստ Կորիւնի, Մաշտոցն իր աշակերտներին մի մասին թողնում է Եղեւսիայում, որպէսզի ասորերէն սովորեն, իսկ միւս մասին ուղարկում է Սամոսատ, որն այդ ժամանակ Բիւզանդիայի Եփրատեսիա նահանգի կազմում էր:

Թէեւ Մաշտոցն ու իր աշակերտները նախապէս, ինչպէս վերը նշուեց, մեկնեցին ասորական քրիստոնէարանութեան կենտրոն՝ Եղեւսիա, սակայն Մաշտոցը բնաւ չէր կամենում ասորական գրերի հիման վրայ հայերէն նշանագրեր յորինել: Դանիէլեան Գրերով ուսուցման ընթացքում նա արդէն որոշակի հետեւութեան էր յանգել: Մաշտոցը հենց սկզբից, եկեղեցու հայրերի հրահանգով, պէտք է հայերէն գրեր յորինէր, ելնելով յունական այբուբէնի լեզուական օրինաչափութիւններից՝<sup>47</sup>: Ինքը՝ Մաշտոցը, ինչպէս տեսանք, մանկուց հմտացել էր հելլէն գպրութեան մէջ, դաստիարակուել հելլէնական քրիստոնէարանութեան ոգով: 387ից յետոյ, Հայաստանի եկեղեցիներին իրբւե ծխական լեզու թոյլ տրուեց միայն ասորերէնը, որից ժողովուրդը ոչինչ չէր հասկանում: Մաշտոցը, ինչպէս վկայում է Փարպեցին, «յարաժամ տրտմէր... տեսանելով զմեծ ջանն եւ զառաւելապէս ծախս մանկանցն Հայաստան աշխարհիս. որք բազում թոշակօք եւ հեռագնաց ճանապարհօք եւ բազմաժամանակեայ դեգերմամբք մաշէին զաւուրս իրեանց ի դպրոցս ասորի գիտութեան: Զանգի պաշտօն եկեղեցոյ եւ կարդացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս եւ յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս. յորմէ ոչ ինչ էին կարող լսել եւ օգտել ժողովորդքն այսպիսի մեծ աշխարհի, եւ լինէր պաշտօնէիցն աշխատութիւն եւ ժողովրդոցն

անշահուիքին յանլուրթնէ լեզուին ասորոյ»<sup>48</sup>։ Բացի այդ, Մաշտոցն իր քարոզչական առաքելութեան բերումով պէտք է որոշ ծանօթութիւն ունենար ասորերէնին, յանգէր այն մտքին, որ նրա հնչոյթները չեն համապատասխանում հայոց լեզուին, ուստի բացառում է այդ լեզուի գրերի հիման վրայ հայերէն տառեր յորինելը։ Նա նախընտրեց յունարէնն իրրեւ աւելի բարձր զարգացած գիտութեան եւ մշակոյթի լեզու, որի այբուբէնն առաւել կատարեալն էր համարւում ժամանակի քրիստոնէական աշխարհում։

Կորիւնը գրում է, թէ Մաշտոցը Սամոսատում հայոց գրերը «նիսնգամայն յօրինեալ եւ յանկուցեալ»։ Ապա, նա իր երկու աշակերտներին հետ ձեռնարկում է թարգմանութիւնների գործը, սկսելով Հին Կտակարանի Սողոմոնի Առակներից, «որ եւ գրեցաւ ձեռանքն այնորիկ գրչին»<sup>49</sup>, այսինքն՝ Հռոփանոսի։ Խորենացին գրում է, որ Սամոսատում Մաշտոցն ու իր աշակերտները հայերէնի են թարգմանել Աստուածաշնչի գրքերը՝ «բովանդակելով զքսան եւ գերկու յայտնիսն»<sup>50</sup>։ Հաւանաբար, պատմահայրը «քսաներկու գրքերի» տակ նկատի է առել Հին Կտակարանի կանոնն ըստ եբրայականի, որի համաձայն, Հին Կտակարանը բաղկացած էր քսաներկու գրքերից։ Հայաստանում այն ծագում էր ասորական խմբագրութիւնից՝ «Պեշիտտա»յից, որը Պարսկաստանի մէջ հեղինակութիւն էր վայելում, շնորհիւ ասորական եկեղեցու քաղաքականապէս արտօնեալ կացութեան<sup>51</sup>։ Պէտք է կարծել, որ «Պեշիտտա»ն հայերէնի թարգմանուել է Եղեսիայում։ Զգուշաւոր նկատառումներով Մաշտոցն ու իր աշակերտները երկար ժամանակ չէին մնայ Բիւզանդիայի սահմաններում, որպէսզի չյարուցէին Սասանեան Դրան կասկածանքը։ Հաւանաբար, Սամոսատում Մաշտոցն ու իր աշակերտները յունարէնից հայերէնի են վերածել Ս. Գրքի մի փոքր ու դիրամատչելի մասը՝ խրատներ պարունակող Սողոմոնի Առակները, որպէսզի պարզեն, թէ Մաշտոցի հնարած գրերը որքանով են ներդաշնակում հայոց լեզուի հնչոյթներին։ Մաշտոցը գործում էր Սահակի հրահանգներով։ Խորատես Սահակը Մաշտոցին թոյլ չէր տայ երկար ժամանակ մնալ Սամոսատում։ Խորենացու հաւաստմամբ, Սահակը Ս. Գրքի թարգմանութիւնն սկզբում կատարել է ասորերէնից<sup>52</sup>, հաւանաբար, բիւզանդասիրութեան մէջ շնորհադրուելու համար։ Բայց Սահակն ու Մաշտոցը կամենում էին իրենց աշակերտներին հմուտ դարձնել թէ՛ յունարէնի եւ թէ՛ ասորերէնի մէջ։ Եղեսիայում հայերէն գրերը հնարելուց յետոյ Մաշտոցն իր աշակերտների մի մասին թողեց այդ քաղաքում՝ ասորերէնի

մէջ խորանայու համար, միւսներին ուղարկեց Սամոսատ՝ յունարէնը իւրացնելու նպատակով<sup>53</sup>։

Հայերէն գրերի գիւտի շնորհիւ քրիստոնէական աշխարհի հետ Հայաստանեայց Եկեղեցու հաղորդակցութիւնն ստացաւ նոր որակ եւ ձեռք բերեց գաղափարաբանական նոր եզրեր։ Մայրենի լեզուով, զիր ու գրականութեամբ զինուած Հայաստանեայց Եկեղեցին գաղափարաբանական առումով ստացաւ յաւելեալ ներոյժ։

Կորիւնի վկայութիւնից հրեւում է, որ Եղեսիայի եւ Սամոսատի եպիսկոպոսները փոխադարձ համաձայնութեամբ սատարել են Մաշտոցին։ Պատմիչը գրում է, որ Սամոսատում Հոսփանոս գրչի ձեռքով հայոց նորաստեղծ գրերը գեղագրական տեսքի բերելուց յետոյ, Մաշտոցը «առնոյր թուղթս յեպիսկոպոստ քաղաքին եւ հրաժարեալ ի նոցանէ հանդերձ ամենայն իրովքն, բերէր առ եպիսկոպոսն Ասորոց։ Որ յորոց նախընկալն եղել, առաջի արկեալ նոցա զնշանագիրս աստուածատուրս. վասն որոյ բազում իսկ գովութիւնք յեպիսկոպոսաց սրբոց եւ յամենայն եկեղեցեաց բարձրանային ի փառս Աստուծոյ, եւ ի մխիթարութիւն աշակերտելոցն ոչ սակաւք»<sup>54</sup>։ Պատմագիրը չի նշում Սամոսատի եպիսկոպոսի անունը<sup>55</sup>, մինչդեռ, ինչպէս նշուել է, նա յիշում է Եղեսիայի եւ Ամիդի եպիսկոպոսների անունները՝ Բարիլաս եւ Ակակիոս, զուցէ նկատի առնելով Հայաստանի ասորի հոգեւորականութեան հետ նրանց մերձակցութիւնը։ Կորիւնը գրում է, որ Մաշտոցը, հայերէն նշանագրերը հնարելուց յետոյ, Հայաստան վերադարձաւ Եղեսիայից, նրա հոգեւոր առաջնորդներից «առեալ թուղթս ատուագիրս, հանդերձ շնորհատուր պարգեւօքն»<sup>56</sup>։ Անշուշտ, Մաշտոցի կողմից գրերի գիւտի աւետիսն ազդարարող գրութիւնը Հայաստան բերելն ինքնանպատակ չէր։ Աւետագիրը պարսկամէտ, ասորի հոգեւորականութեանը պէտք է հաւաստէր, որ Մաշտոցեան Գրերը հնարուել են եւ Ս. Գիրքը թարգմանուել է Եղեսիայի հոգեւոր հայրերի գիտութեամբ ու սատարմամբ։ Նշուած աւետագիրը պէտք է դառնար ասորական եկեղեցու հետ Հայաստանեայց Եկեղեցու համադաշն ձեռնարկմամբ հայերէն գրերի ստեղծման գրաւոր վկայութիւնը, որը հարկ եղած դէպքում ի ցոյց էր դրուելու նաեւ պարսից դրանք։

Կորիւնը եւ նրա հետեւողութեամբ հայ միւս մատենագիրները Մաշտոցեան Գրերը համարում են «աստուածատուր նշանագրեր», կամենալով զուգահեռներ անցկացնել Մաշտոցի ու աստուածաշնչեան Մովսէս մարգարէի միջեւ։ Ինչպէս որ Աստուծոյ կողմից Մովսէսին շնորհուեցին հրէից օրէնքները, նոյն կերպ Մաշտոցն արժանացաւ Տիրոջ ա-

մենայն շնորհներին՝ ստեղծելով հայոց գրերը: Այդպիսով, գրերի գիւտը համարուել է աստուածաշնչորէն մեծ ու վեհաշունչ երեւոյթ, որը վեր պէտք է լինէր սովորական մահկանացուի ոչ թերից: Աստուածատուր կամ քրիստոսատուր համարելու փաստն ինքնին ազդանշում էր, որ հայերէն գրերը քրիստոնէական կրօնի կողմից հայ ազգին ընձեռնուած հոգեւորոգ պարգեւ է: Կորիւնը նաեւ հաւաստում է, որ Մաշտոցը «սուրբ աջովն իւրով» ստեղծեց հայերէն նշանագրերը<sup>57</sup>: Պատմագիրը չի մոռանում նշել նաեւ, որ եթէ Մովսէսը Սինա լեռան վրայից աստուածատուր օրէնքները ձեռքին իջնելիս հանդիպեց «վրժագործ ժողովրդեանն», որոնք երկրպագում էին ձուլածոյ կուռքին, եւ նոյնիսկ լացացրին Մովսէսին, Մաշտոցն «ինքն իւրով» համակոււծ է «հոգետր մխիթարութեամբ», քանի որ գիտէր «զընդունելեացն յօժարութիւնն»<sup>58</sup>: Յայտնի է, թէ ժողովուրդն ինչպիսի՞ յղթացնձանքով դիմաւորեց Եղեսիայից վերադարձող Մաշտոցին ու նրա աշակերտներին:

Կորիւնն աստուածային հրամանով կատարուած է համարում հայոց դպրութեան ստեղծումը, առաջին հերթին նկատի առնելով Ս. Գրքի թարգմանութիւնն ու բազմացումը: Մահակն ու Մաշտոցը, ըստ Կորիւնի, կատարեցին աստուածային գործը՝ «զաւետարանական արուեստն ի բարգմանել, ի գրել եւ յուսուցանել, մանաւանդ հայեցեալ ի տեսնարարքառ հրամանացն բարձրութիւնն, որ առ երանելիս Մովսէս եկեալ, վասն ամենայն իրացն եղելոց»<sup>59</sup>: Խորենացին Մաշտոցի կողմից վրաց գրերի ստեղծումը եւս համարում է աստուածաշնչորէն պարգեւ: Պատմահայրը գրում է. «Իսկ Մեսրոպայ երթեալ յաշխարհն Վրաց առնէ եւ նոցա նշանագիրս տուեցելովն ի վերուստ շնորհան, հանդերձ Ջաղայի ոմանք բարգմանաւ հեղէն եւ հայ լեզուի, ձեռնտու լինելով արքայի նոցա Բակրոյ եւ եպիսկոպոսին Մովսիսի»<sup>60</sup>:

Կորիւնը գրերի գիւտից յետոյ Հայաստանում ծաւալուած կրթական գործը եւս գիտում է իրրեւ աստուածային շնորհ, գրելով. «Այրարատեան գաւառին՝ ի կայս թագաւորացն եւ քահանայապետացն, բոխեցին հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ»<sup>61</sup>: Պատմագիրը հաւաստում է նաեւ, որ «սխնք եկեղեցոյ», այսինքն՝ Մահակն ու Մաշտոցը, կատարում էին Քրիստոսի աւետարանիչների գործը, Հայոց Աշխարհի բոլոր հորիզոններում սփռելով քրիստոնէութեան հոգեւորոգ գաղափարները<sup>62</sup>:

Այս եւ համարնոյթ այլ որակումներ նպատակ ունէին հայոց գրերի ու դպրութեան ստեղծումը ներկայացնել իրրեւ աստուածաշնչորէն մեծագործութիւն: Հարկաւ, Հայաստանում քրիստոնէութեան ամրակայաց-

ման առումով Մաշտոցին եւ նրա վեհասքանչ գործին նման դեր էր վերապահուած: Բնաւ պատահական չէր, որ յետագայում ԺԲ. դարում, Կարապետ Եպիսկոպոս Սասնեցին, Մաշտոցի մասին գրած ճառ-ներբողեանի մէջ, գրում է, որ երբ Մաշտոցն իր աշակերտների հետ Եղեսիայից վերադարձաւ Հայաստան, Սահակն ու նրան ուղեկցող հոգեւորականները համբուրեցին նրան, «իբրեւ գնոյն ինքն զՅիսուս, եւ կամ զաշակերտս նորա»<sup>63</sup>:

Անշուշտ, Սահակը եւս մեծ երախտիք ունէր հայոց գրերի ստեղծման գործում: Աստուածաշնչի հայերէն թարգմանութեամբ, գրում է Կորիւնը, «աշխարհս Հայոց անպայման սրանչելի լինէր. յորում յանկարծ ուրեմն օրէնստայց Մովսէս՝ մարգարէական դասուն, եւ յառաջադէմն Պաղոս՝ քովանդակ առաքելական գնդովն, հանդերձ աշխարհակեցոյց անտարանան Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառք հայերէնախօսք գտան»<sup>64</sup>: Ս. Գրքի թարգմանութիւնից յետոյ, Սահակն ու Մաշտոցն՝ իբրեւ «սիւնք եկեղեցոյ միջամուխ ձեռամբ զգործ անտարանչացն Քրիստոսի գործել, գումարել ի կողմանս, ի գաւառս, ի տեղիս տեղիս Հայաստան ազգին, դասս դասս զաշակերտեալսն ճշմարտութեանն, զհասուցելոցս ի կատարումն զիտութեան, բաւականս եւ առ ի զայլսն զեկուցանելոյ»<sup>65</sup>: Նրանց կրթալուսաւորչական եւ թարգմանչական գործունէութիւնը համբնկաւ Պարսկաստանում ստեղծուած կրօնական նոր իրադրութեան հետ: 420ականների սկզբին հիմնուեց Պարսկաստանի քրիստոնէական եկեղեցին, որը Տիգրանում գումարուած եկեղեցաժողովում ընդունեց Նիկիայի առաջին տիեզերաժողովի (325) հաստատած Հաւատոյ Հանգանակը: Թէեւ Տիգրանի քրիստոնէական եկեղեցին հետեւեց Անտիոքի եկեղեցու աստուածաբանական աւանդներին<sup>66</sup>, այն, պարսից Վռամ Ե. Գոռ արքայի օրօք (420-439), խզեց իր կապերը Արեւելքի (այդ թւում նաեւ Անտիոքի) քրիստոնէական եկեղեցիների հետ: Այս քայլն, անշուշտ, ունէր քաղաքական յետնախորք եւ նպատակամիտուած էր վերացնել Պարսկաստանի եւ Բիւզանդիայի քրիստոնէական եկեղեցիների միջեւ ձեւաւորուած հոգեւոր հաղորդակցութիւնը<sup>67</sup>:

Եղեսիայի ասորական եկեղեցին հաւատարիմ մնաց Ալեքսանդրիայի եկեղեցու հետ ունեցած աւանդական կապերին: Եղեսիայի աթոռի եւ Հայաստանեայց Եկեղեցու միջեւ եղած կրօնադաւանական առնչութիւնների խորացմանը էպպէս նպաստեց այն հանգամանքը, որ հայ հոգեւորականները շարունակեցին հետեւել Ալեքսանդրիայի եկեղեցու դաւանական սկզբունքներին:

Մահակի ու Մաշտոցի նպատակասլաց ջանքերի շնորհիւ Հայաստանում դրուեցին կրթա-լուսաւորական համակարգի հիմքերը: «Ի կողմանց եւ ի գաւառաց Հայաստան աշխարհին,- գրում է Կորիւնը,- յորդեալք եւ ղրդեալք հասանէին ի քացեալ աղբիւրն գիտութեանն Աստուծոյ»<sup>68</sup>: Պատմիչի կողմից աստուածային համարուող գիտութեան յորդարուիս աղբիւրը Վաղարշապատ մայրաքաղաքում էր, ուր, ըստ երեւոյթին, բացուել էր աստուածաբանական վարդապետանոց, որտեղ պատրաստուում էին քարոզիչներ, ինչպէս նաեւ ուսուցիչներ՝ դպրոցներում դասաւանդելու համար: Այդ կրթարանում Մահակն ու Մաշտոցը «կանոն եւ օրինակ գիրեանց անձանց արգասիս եղեալ, եւ պատուիրեալ կալ ի նմին կանոնի»<sup>69</sup>:

Սակայն Մաշտոցը երկար շնաց Վաղարշապատում եւ վերստին նետուեց քարոզչական առաքելութեան յորձանուտը եւ նախ «երթեալ իջանէր յՈւոտաստակն Գողթան, յառաջին դաստակերտն իւր»<sup>70</sup>, որի տակ հաւանօրէն Կորիւնը նկատի ունի այդ գաւառն իրրեւ Մաշտոցի առաջին եւ անյաջող առաքելութեան ասպարէզ:

Կորիւնի երկում տեղ գտած տեղեկութիւնները որոշ չափով հնարաւորութիւն են ընձեռում պարզել գրերի գիւտին եւ Մաշտոցի լուսաւորչական առաքելութեան առաջին շրջանին առնչուող ժամանակագրական որոշ խնդիրներ: Պատմագիրը հաղորդում է, որ Դանիէլեան Գրերը Հայաստան են բերուել Վռամշապուհի թագաւորութեան հինգերորդ տարում<sup>71</sup>: Յայտնի է, որ Վռամշապուհը գահակալել է 389ից<sup>72</sup>: Հետեւաբար, նրա թագաւորութեան հինգերորդ տարին կը լինի 394 թուականը: Բայց, որովհետեւ տուեալ դէպքում «հինգերորդն» ուղղելի է «երրորդ» ձեւով<sup>73</sup>, ուստի Դանիէլեան Գրերը Հայաստան են բերուել ոչ թէ 394ին, այլ 392ին: Պակասաւոր այդ գրերով երկու տարի փորձեցին ուսուցանել հայկական դպրոցներում, ապա Վռամշապուհի գահակալման հինգերորդ տարում՝ 394ին, Մաշտոցն իր աշակերտների հետ մեկնեց Եղեւսիս եւ Ամիդ, ներկայանալով Բարբրաս (Ռարբրաս) եւ Ակակ եպիսկոպոսներին<sup>74</sup>: Ռարբրասի եպիսկոպոսութիւնն ընկնում է 411-435ին, Ակակինը՝ սկսած 419 կամ 420ից: Ստացւում է, որ Մաշտոցն այդ քաղաքներ է այցելել 419ից ոչ վաղ, ինչը, սակայն, ժխտում է Կորիւնի յետագայ տեղեկութիւններով: Այսպէս, պատմիչն իր երկի վերջին հատուածում նշում է, որ հայոց գրերի գիւտից մինչեւ Մաշտոցի վախճանուելը տեւել է 35 տարի<sup>75</sup>: Քանի որ Մաշտոցն իր մահկանացուն կնքել է 440ի Փետրուարի 17ին (Մեհեկան ամսի 13ին), ուստի գրերի գիւտն ընկնում է 405ին: Սակայն, Կորիւնը հաղորդում է նաեւ, որ հայոց դպրութիւնը սկզբնա-

ւորուել է պարսից Յագկերտ Ա. Թագաւորի ութերորդ տարում<sup>76</sup>, ուստի գրեթէ զիւտի տարեթիւը տեղաշարժւում է, ընկնելով 407ին, քանի որ Յագկերտը գահակալել է 399ից: Հաւանաբար, Կորիւնը Յագկերտի Թագաւորութեան սկիզբ է համարել 397 թուականը, ուստի վերը նշուած «ուրերորդ»ը պէտք է սրբագրել «վեցերորդ»ով, որով եւ գրեթէ զիւտի տարեթիւն ընկնում է 405ին: 405ին կամ 406ին Սահակն ու Մաշտոցը կատարեցին Ս. Գրքի թարգմանութիւնը յունարէն ընագրից, որից յետոյ՝ 406ի աշնանը կամ 407ի գարնանը, Մաշտոցը՝ հայացուած Աստուածաշունչը ձեռքին, վերստին մեկնեց Գողթն:

Վերելում ականարկուեց, որ Կորիւնի մեզ հասած ձեռագրերում նշուել է, որ Դանիէլեան Գրեքը Հայաստան բերուել են Վռամշապուհի հինգերորդ տարում, եւ նոյն տարում Մաշտոցը մեկնել է Եղեսիա<sup>77</sup>: Հ. Ներսէս Վրդ. Ակիւնեանը վերատեղադրելով Կորիւնի երկի որոշ հատուածներ, փորձել է լուծել երկու «հինգերորդ»ների միջեւ եղած հակասութիւնը<sup>78</sup>: Նրա հետեւողութեամբ Արտաշէս Մաթեւոսեանը կարծում է, որ Դանիէլեան Գրեքը Հայաստան են բերուել Վռամշապուհի հինգերորդ տարում, եւ հենց նոյն տարում էլ Մաշտոցը մեկնել Եղեսիա<sup>79</sup>: Մինչդեռ Կորիւնը գրում է, որ մօտ երկու տարի Մաշտոցն այդ գրերով սովորեցրել է աշակերտներին<sup>80</sup>: Հարկաւ, Դանիէլեան Գրեթի փորձարկումը միաժամանակեայ գործողութիւն չէր: Այսպէս, նախ երեխաներ են ժողովում, որպէսզի այդ գրերը կիրառեն: Երեխաներին սովորեցնում են, որի համար ժամանակ էր պահանջում: Դրանից յետոյ, Դանիէլեան Գրեթն անցնում են փորձարկման յաջորդ փուլը, որի ընթացքում ուսուցումը տարւում է ամէնուրեք<sup>81</sup>, ինչն աւելի երկար ժամանակ էր պահանջում: Ուստի հարկ չկայ անդամահատել Կորիւնի երկը: Ինչպէս նախապէս ընդգծել ենք, առաջին «հինգերորդ»ը պէտք է սրբագրել «ւրերորդ», ինչպէս ժամանակին առաջարկել է Հրաչեայ Աճառեանը<sup>82</sup>:

Մաշտոցի կողմից հայոց գրեթէ զիւտը յեղափոխիկ իրադարձութիւն էր, որը հիմք դարձաւ ժողովուրդի հոգեւոր զարթօնքի: Ե. դարում սկզբնաւորուած հայ պատմագրութիւնը նաեւ քաղաքական գաղափարաբանութիւն էր, հայի հոգում ծածանուող դրօշ, որը նրան ընձեռեց նոր աշխարհայեացք եւ դարձաւ գաղափարական լուսածիր՝ էականորէն հարստացնելով նրա հոգեւոր աշխարհը, նպաստելով ժողովրդի քաղաքական եւ կրօնադաւանական ընդհանրութեանը: Սահակն ու Մաշտոցը դարձան հայ ժողովրդի մտքի եւ իմաստութեան փառասուն առաքեալները, որոնց շնորհիւ կոփուեց մեր ժողովուրդի հոգեւոր ճակատ

տազիրը եւ առ այսօր անմար կը մնայ հայոց դպրութեան լուսավառ ջահը:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- <sup>1</sup> Հազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց Եւ Թուրք Առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տփղիս, Արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի, 1904, էջ 8-9.
- <sup>2</sup> Կորիւն, Հարթ Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական այլ ընթերցումներով, թարգմանութեամբ, առաջարանով եւ ծանօթագրութիւններով ի ձեռն Պրոֆ. Դ-ր Մ. Արեղեանի, Երեւան, «Հայպետհրատ», 1941, էջ 36: Յատկանշելի է, որ Անանիա Շիրակացուն վերագրուած է դարի անանուն ժամանակագրութեան մէջ Մաշտոցը սերուած է համարուած «յազատ տանէ», տե՛ս՝ Պրոֆ. Դ-ր Աբրահամեան, Անանիա Շիրակացու Մատենագրութիւնը, Ա. Գ. Ուսումնասիրութիւն, Երեւան, ՀՍՍՌ Մատենագրանի Հրատարակչութիւն, 1944, էջ 389.
- <sup>3</sup> Մոխրիս Խորենացոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Արեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, Արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի, 1913, էջ 316.
- <sup>4</sup> Կորիւն, էջ 36.
- <sup>5</sup> Խորենացի, էջ 325.
- <sup>6</sup> Կորիւն, էջ 36.
- <sup>7</sup> Նոյն.
- <sup>8</sup> Փարպեցի, էջ 13.
- <sup>9</sup> Նոյն.
- <sup>10</sup> Խորենացի, էջ 316.
- <sup>11</sup> Փարպեցի, էջ 8.
- <sup>12</sup> Յակոբ Մանանդեան, Քննական Տեսութիւն Հայ Ժողովրդի Պատմութեան, Բ հատոր, Ա. մաս, տե՛ս՝ Նոյն, Երկեր, Բ. Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1978, էջ 243.
- <sup>13</sup> Նոյն, «Մերոպ Մաշտոցը Եւ Հայ Ժողովրդի Պայքարը Մշակութային Ինքնուրոյնութեան Համար», տե՛ս՝ Նոյն, Երկեր, Բ, էջ 448.
- <sup>14</sup> Նոյն, էջ 450.
- <sup>15</sup> 444/446ին գումարուած Շահապիվանի եկեղեցաժողովի ընդունած Բ. կանոնում ասուում է, որ ովքեր «ի կարգ զինուորորեան կացցեն եւ ի հարկս արքունի», չպէտք է առնչուեն եկեղեցու պաշտօնեաների հետ, տե՛ս՝ Կանոնագիրք Հայոց, Ա, աշխատատեղութեամբ Վ. Յակոբեանի, Երեւան, Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն, 1964, էջ 431.
- <sup>16</sup> Նոյն, էջ 480.
- <sup>17</sup> Կորիւն, էջ 36.
- <sup>18</sup> Նոյն, էջ 38.
- <sup>19</sup> Փարպեցի, էջ 13.
- <sup>20</sup> Կորիւն, էջ 38.
- <sup>21</sup> Նոյն, Հաւանարար այդ աշակերտներից մի քանիսը յետագայում, հայոց գրերի գիտից յետոյ, շարունակել են ուսանել Մաշտոցի մոտ.
- <sup>22</sup> Կորիւն, էջ 38.

<sup>23</sup> Նոյն, էջ 30:

<sup>24</sup> Նոյն:

<sup>25</sup> Նոյն, էջ 32:

<sup>26</sup> Նոյն, էջ 34:

<sup>27</sup> Նոյն:

<sup>28</sup> Ն. Աղսնց, «Մաշթոց Եւ Նրա Աշակերտներն Ըստ Օտար Ազգիւրների», տե՛ս՝ Հայկական ՍՍՏ Գիտութիւնների Ակադեմիա, Պատմութեան Ինստիտուտ, Մետրոպ Մաշտոց Եղեռածների Ժողովածու, Երևան, Հայկական ՍՍՏ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն, 1982, էջ 199:

<sup>29</sup> Կորիւն, էջ 40:

<sup>30</sup> Նոյն:

<sup>31</sup> Նոյն, էջ 60:

<sup>32</sup> Նոյն, էջ 40:

<sup>33</sup> Փարպեցի, էջ 13:

<sup>34</sup> Փաւստոսի Բուզանդացու Պատմութիւն Հայոց, ի յոս ած Ք[երովբէ] Պ[ատկանեան], Ս. Պետրբուրգ, Ի սպարանի Կայսերական Զեմարանին Գիտութեանց, 1883, էջ 31:

<sup>35</sup> Այս մասին տե՛ս՝ Եզնիկ երէցի հեղինակած Հայոց կաթողիկոսների համառօտ պատմութեան մէջ, որ գտնուողւած է Սամուէլ Անեցու երկում տե՛ս՝ Սամուէլի Բահանայի Անեցու Հաւարմունք Ի Գրոց Պատմադրաց Թաղապս Գիւտի Ժամանակաց Անեցոց Միջեւ Ի Ներկայս, յառաջարանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, Ս. էջմիածնի Տպարան, 1893, էջ 267:

<sup>36</sup> Կորիւն, էջ 42:

<sup>37</sup> Նոյն:

<sup>38</sup> Նոյն, էջ 46:

<sup>39</sup> Հրաչեայ Աճառեան, Հայոց Գրերը, Երևան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1968, էջ 158:

<sup>40</sup> Հմմտ. Երուանդ Վարդապետ Տէր-Մինասեանց, Հայոց Եկեղեցու Թարաբերութիւնները Ասորոց Եկեղեցիների Հետ Հայ Եւ Ասորական Ազգիւրներու Համաձայն, Ս. էջմիածին, Տպարան Մայր Աթոռոյ, 1908, էջ 11-12: Ենթադրուած է, որ Վառաձայուհը Մաշտոցին ուղարկել է Ասորիք՝ Դանիէլեան Գրերը բերելու համար, որպէսզի ասորական եկեղեցու հետ ձեռք բերուի համաձայնութիւն եւ այդ կերպ հնարաւոր դասնայ ճշուած գործադրել Հայաստանի ասորի հոգեւորականութեան վրայ եւ ընկճել նրանց դիմադրութիւնը տե՛ս՝ Արտաշէս Մարտիրոսեան, Մաշտոց (Պատմա-Քննական Տեսութիւն), Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1982, էջ 188-189: Աւելի հաւանական է կարծել, որ Միջագետքի եւ Հայաստանի ասորի հոգեւորականները գործում էին համադաշն կերպով՝ ի հեճուկս Հայաստանեայց Եկեղեցու հայրերի:

<sup>41</sup> Կորիւն, էջ 44:

<sup>42</sup> Նոյն, էջ 48:

<sup>43</sup> Խորենացի, էջ 326-327:

<sup>44</sup> Կորիւն, էջ 48:

<sup>45</sup> Խորենացի, էջ 327:

<sup>46</sup> Կորիւն, էջ 48:

- <sup>47</sup> Հ. Մարկուարտ, «Հայոց Այբուբենի Ծագումը Եւ Ս. Մաշտոցի Կենսագրութիւնը», տե՛ս՝ *Մերոպ Մաշտոց*, էջ 151-152:
- <sup>48</sup> Փարպեցի, էջ 13:
- <sup>49</sup> Կորիւն, էջ 48-50:
- <sup>50</sup> Խորենացի, էջ 327:
- <sup>51</sup> Դոկտ. Յ. Ս. Անասեան, *Մանր երկեր, ներածութեամբ՝ Պրոֆ. Ա. Գ. Սանճեանի*, Լոս Անջելէս, 1987, էջ 2-3:
- <sup>52</sup> Պատմաճօր կարծիքով Մահակն ասորերէնից է Աստուածաշունչը թարգմանել Հայերէնի՝ յունարէն օրինակ չգտնելու պատճառով: Ընդ որում նա դրա պատճառ է համարում այն, որ Հայաստանի առաջին բաժանումից յետոյ՝ «չտային պարսիկ վերակացուրն յոյն ունեք ուսանել դպրութիւն յիրեանց մասինն, այլ միայն ասորի»: տե՛ս՝ *Խորենացի*, էջ 329:
- <sup>53</sup> Կորիւն, էջ 46:
- <sup>54</sup> Նոյն, էջ 50:
- <sup>55</sup> Բեկդիացի Հայագէտ Պոլ Պետերսն այս եպիսկոպոսին յիշում է Անդրէաս անունով, տե՛ս՝ *Աճառեան, Հայոց Գրերը*, էջ 123:
- <sup>56</sup> Կորիւն, էջ 50:
- <sup>57</sup> Նոյն, էջ 48:
- <sup>58</sup> Նոյն, էջ 52:
- <sup>59</sup> Նոյն, էջ 54:
- <sup>60</sup> Խորենացի, էջ 328:
- <sup>61</sup> Կորիւն, էջ 58:
- <sup>62</sup> Նոյն:
- <sup>63</sup> Կարապետ Սասնեցի, *Ներբողեան Յազազս Վարուց Եւ Մահուան Ս. Վարդապետին Մերոպայ թարգմանչի Եւ Լուսաւորչի, աշխ. Մ. Տէր-Մովսէսեանի, Վաղարշապատ, 1807*, էջ 45:
- <sup>64</sup> Կորիւն, էջ 56:
- <sup>65</sup> Նոյն, էջ 58:
- <sup>66</sup> S. Brok, «Khristologgia Tserkvi Vostoka» [Արեւելի Եկեղեցու Քրիստոսաբանութիւն], *Vestnik Drevnei Istarii* [Հին Պատմութեան Լրագր], թիւ 2, 1995, էջ 40-41:
- <sup>67</sup> *The Cambridge History of Iran*, vol. 3 (1): The Seleucid, Parthian and Sasanian Periods, Cambridge, 1983, էջ 485-486:
- <sup>68</sup> Կորիւն, էջ 58:
- <sup>69</sup> Նոյն:
- <sup>70</sup> Նոյն, էջ 60:
- <sup>71</sup> Նոյն, էջ 44:
- <sup>72</sup> Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան, *Ազգապատում Հայ Ազգապառ Եկեղեցւոյ Անցրերը Սկիզբէն Մինչև Մեր Օրերը Յարակից Ազգային Պարագաներով Պատմութեամբ*, [Հատոր Ա], Կոստանդնուպոլիս, Հրատարակութիւն Վ. Եւ Հ. Տէր-Ներսէսեանի, 1912, սրւնակ 263-264:
- <sup>73</sup> Աճառեան, *Հայոց Գրերը*, էջ 387:
- <sup>74</sup> Կորիւն, էջ 46:
- <sup>75</sup> Նոյն, էջ 98:
- <sup>76</sup> Նոյն, էջ 100:

<sup>77</sup> Նոյն, էջ 46:

<sup>78</sup> Հ. Ն. Ակինեան, «Պատմական Աղբյուրները 380-450 Շրջանի Համար (Համառոտ Տեսություն)», *Հանդես Ամսօրեայ, ԽՔ* տարի, թիւ 10-12, Հոկտեմբեր-Դեկտեմբեր 1935, սրնակ 456-457; Կորիւն, *Պատմութիւն Հարուց Ս. Մաշտոցի, հրատարակեց հանդերձ ներածութեամբ եւ ծանօթութիւններով Հ. Ներսէս Վ. Ակինեան Մխիթ. Ուխտէ, Բ. Տպագրութիւն, Բնագիրք Եւ Քննութիւնք Մատենագրութեան Նախնեաց Հայոց, Հ. Ա. պրակ 1, Հիննա, Մխիթարեան Տպարան, 1952, էջ 18, 80 (ծան. 18):*

<sup>79</sup> Ա. Ս. Մաթեոսեան, «Կորիւնի Զեազրի Խախտում Թղթի Ստեղծած Եփոթը Հայ Մատենագրութեան Ու Բանասիրութեան Վէջ», *Բազմալէզ, ՃԽԸ* տարի, թիւ 1-2, 1990, էջ 121-127; Կորիւն, *Հարց Մերոց Մաշտոցի, աշխատութեամբ՝ Արտաշէս Մաթեոսեանի, Երեւան, «Հայաստան», 1994, էջ 132, ծան. 59:*

<sup>80</sup> Կորիւն, էջ 44:

<sup>81</sup> Նոյն:

<sup>82</sup> Պրոֆ. Հ. Աճառեան, «Երկու Ուղղում Կորիւնի Մէջ», *Տեղեկագիր ՍՍԽՄ Գիտութիւնների Ազգայնաբանական Ինստիտուտի, Երեւան, No. 1 (6), 1941, էջ 169-170:*

## THE INITIAL STAGE OF THE RELIGIOUS-EDUCATIONAL MISSION OF MESROP MASHTOTS

(Summary)

VREJ VARDANIAN

The author argues that securing the spiritual independence of the Armenians became a powerful tool towards maintaining this people's survival in the last decades of the Arshakuni (Arsacid) Kingdom in Armenia. This spiritual independence was achieved thanks to the invention of the Armenian alphabet by Mesrop Mashtots in the year 405 AD. Mashtots's feat also raised hopes for Armenian political distinctiveness. The invention of the Armenian alphabet was greeted adversely among the pro-Persian Syrian clergy that enjoyed immense influence in Armenia at the time. The Persian kings used to support the Syrian clergy as leverage against the Byzantine Church. Mashtots invented the Armenian alphabet in the Persian-controlled, Syrian city of Edessa in an attempt to weaken resistance by the Syrian clergy in Armenia. Mashtots and his disciples also translated the Bible to Armenian initially from the Syriac *Peshitta* version. The author Koriun drew parallels between Mashtots and the Biblical prophet, Moses, so as to argue that the invention of the Armenian alphabet was an exalted act, sanctioned and blessed by God.